<<ՀԱՍՏԱՏՎԱԾ Է>>

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 30.10.2013թ. ԹԻՎ 21 ՆԻՍՏՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ

_____ ՀՈՎՀ. ՎԱՐՅԱՆ

<< >> _____ 2013թ.

Կ Ա Ր Գ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողներին անվանական կրթաթոշակների (այսուհետ՝ կրթաթոշակ) հատկացման կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի առկա անվճար ուսուցման բակալավրիատի և քոլեջի սովորողներին կրթաթոշակների հատկացման կարգը և պայմանները:

(1-ին կետը փոփոխվել է գիտական խորհրդի 15.09.2016թ. որոշմամբ, արձ. թիվ 4)

2. Սույն կարգի իրավական հիմքերն են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ կետի 8-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշումը:

II. ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. ՀՀ ոստիկանության կրթահամալիրն իրավասու է սեփական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին սահմանելու կրթաթոշակներ:

4. Կրթաթոշակի անվանումը, աղբյուրը, ֆոնդը և սովորողների ցուցակը հաստատում է կրթահամալիրի գիտական խորհրդը:

5. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կրթաթոշակ նշանակվում է քոլեջի և ակադեմիայի առկա անվճար ուսուցման բակալավրիատի նախորդ ուսումնական տարվա քննաշրջաններին գերազանց գնահատականներ ստացած, ծառայողական կարգապահություն և հասարակական ակտիվություն ցուցաբերած սովորողներին, ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի հանձնարարությամբ՝ գերազանց և լավ գնահատականներ ստացած սովորողներին:

(5-րդ կետը փոփոխվել է գիտական խորհրդի 17.12.2014թ. որոշմամբ, արձ. թիվ 6 և 31.08.2015թ. որոշմամբ, արձ. թիվ 4:)

6. Կրթաթոշակի հավակնորդ սովորողների թեկնածությունները քննարկում են ակադեմիայի խորհրդում և քոլեջի խորհրդում, որի վերաբերյալ հիմնավորված եզրակացություններ են ներկայացվում կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչությանը:

(6-րդ կետը փոփոխվել է գիտական խորհրդի 15.09.2016թ. որոշմամբ, արձ. թիվ 4)

7. Կրթաթոշակի հավակնորդների ցուցակը ուսումնամեթոդական և զարգացման վարչությունը ներկայացնում է կրթահամալիրի գիտական խորհրդի հաստատմանը: Կրթահամալիրի գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ հաստատում է այն, որի հիման վրա կրթահամալիրի պետը տալիս է համապատասխան հրաման:

8. Կրթաթոշակի արժանացած սովորողներին տրվում է սույն կարգի հավելվածով սահմանված ձևի հավաստագիր, որը ստորագրվում է ՀՀ ոստիկանության պետի կողմից:

9. Կրթաթոշակների տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր կիսամյակի սկզբում:

10. Ուսումնական տարվա ընթացքում կարգապահական խախտման համար տույժի ենթարկված սովորողին կրթաթոշակի հատկացումը դադարեցվում է կրթահամալիրի պետի հրամանով: